# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

***ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Նազենի Ղարիբյան***

- **ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ**

***Բաղդադ,Դուհոք (Իրաքի Հանրապետություն)***

***2018 թ. հոկտեմբերի 23-27-ը***

- **ՆՊԱՏԱԿԸ**

***Բաղդադում Իրաքի Հանրապետության մշակույթի նախարարության բարձրաստիճան ներկայացուցչի հետ քննարկելու հայ-իրաքյան մշակութային համագործակցության ամրապնդմանն ուղղված և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի իրականացման ընթացքը, ինչպես նաև մասնակցելու Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնին:***

Հոկտեմբերի 23-27-ը մեկնեցի Իրաքի Հանրապետություն՝ Իրաքի մշակույթի նախարարության բարձրաստիճան ներկայացուցչի հետ քննարկելու հայ-իրաքյան մշակութային համագործակցության ամրապնդմանն ուղղված և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ծրագրերը, ինչպես նաև ներկա գտնվելու Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնին (այս տարվա կինոփառատոնը նվիրված էր Հայաստանին):

**Հոկտեմբերի 24-ին** հանդիպեցի Իրաքի մշակույթի փոխնախարար Թահեր Նասըր Ալ Հմուդին և մշակութային արտաքին կապերի վարչության ընդհանուր տնօրեն Ֆալահ Էլ Շաքերին: Հանդիպմանը ներկա էր նաև Իրաքում ՀՀ դեսպանության ներկայացուցիչ Ալիկ Ղարիբյանը:

Շնորհակալություն հայտնեցի գործընկերոջս հանդիպման կազմակերպման համար և ներկայացրեցի հայ-իրաքյան մշակութային համագործակցության շրջանակում վերջին տարիներին իրականացված ծրագրերը: Քննարկվեցին հայ-իրաքյան մշակութային կապերի հաստատմանն ուղղված քայլերը՝ մասնավորապես 2017 թ. սկսված երկու երկրների մշակույթի նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագիրը վերջնականացնելու և երկու նախարարների կողմից ստորագրվելու հարցը:

«Իրաքի Հանրապետության մշակույթի նախարարության և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջև մշակույթի և հնագիտության ոլորտներում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագծի լրամշակված տարբերակը իրաքյան կողմին փոխանցվել է դեռևս 2017 թ. փետրվարին: Փաստաթղթի նախագիծը քննարկվեց աշխատանքային կարգով. իրաքյան կողմը դրական է գնատահատում փաստաթղթի նախագծում տեղ գտած մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման, գրական-թարգմանական, ազգագրական արվեստի, ժողովրդական երգի ու պարի, կինոյի և մշակութային կրթության ոլորտներում համագործակցության և փոխանակումների ակտիվացման կետերը:

Առանձնազրույցի ընթացքում իրաքյան կողմն առաջարկեց ակտիվացնել համագործակցությունը մանկական գրականության երկկողմ թարգմանությունների, ինչպես նաև երկու երկրներում մշակութային շաբաթների կազմակերպման միջոցով:

**Նույն օրը** այցելեցի հայկական արքեպիսկոպոսական առաջնորդարան, որի տարածքում գործում են մեծ եկեղեցի, հանդիսությունների դահլիճն ու դպրոցը: Հնարավորություն ընձեռվեց հանդիպելու հայ համայնքի անդամների, համայնքի ղեկավար Մելքոն Մելքոնյանի, ռեժիսոր-խմբապետ, Իրաքի մշակույթի նախարարության պաշտոնյա Արա Եսայանի և դպրոցի ուսուցիչ, գրող, մտավորական Արամ Քեթենջյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին տեղի հայ համայնքի հետ մշակութային կապերի և համատեղ միջոցառումների

կազմակերպման հարցերը: Այնուհետև վարդապետ հայր Միքայել Սարգսյանի ուղեկցությամբ շրջայց եղավ եկեղեցի, հանդիսությունների դահլիճ և դպրոց:

Համայնքի հետ հանդիպման ընթացքում համայնքի ներկայացուցիչները առաջարկեցին տեղի հայ դերասանների մասնակցությամբ Հայաստանում կազմակերպել համայնքային թատերախմբի օպերետային ներկայացումը: Ես առաջարկեցի Բաղդադում կազմակերպել հայ կինոյի շաբաթ և լուսանկարների ցուցահանդես:

**Հոկտեմբերի 25-ին** մեկնեցի Էրբիլ, այնտեղից Դուհոք և մասնացեցի Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնի կազմկոմիտեի կողմից կազմակերպված ընդունելությանը:

Նույն օրը կայացան հանդիպումներ նահանգապետի, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների՝ մասնավորապես Դուհոքի մշակույթի և արվեստների տնօրինության ղեկավար Այուբ Ռամադանի, քրդական խորհրդարանի հայ ներկայացուցչի, քուրդ գրողների միության նախագահ Հասան Սլեվանի, ինչպես նաև փառատոնի գեղարվեստական ղեկավարի և կազմակերպչական խմբի անդամների հետ: Հանդիպումներին ներկա էր Իրաքում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Գրիգորյանը: Հանդիպումների ընթացքում երկուտեք կարևորվեց երկու երկրների միջև մշակութային համագործակցության ընդլայնումն ու խորացումը:

**Հոկտեմբերի 26-ին,** որպես նախարարության պաշտոնական ներկայացուցիչ՝ մասնակցեցի Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնի հայկական արտադրության ֆիլմերի ցուցադրությանը և դրա շրջանակում փառատոնի տեսական բաժնում անցկացված պանելային քննարկումներին՝ նվիրված Սերգեյ Փարաջանովի ֆիլմերում տեղ գտած քրդական կերպարներին: Ներկայացրի հայ ժամանակակից կինոյի և կինեմատոգրաֆիայի հարցում մշակույթի նախարարության նոր քաղաքականության համառոտ ակնարկը: Ելույթիս հետևեց

մոտ մեկուկեսժամյա հարց ու պատասխան. հարցերը բազմազան էին՝ հայ-քրդական պատմական հարաբերություններից և հայկական ցեղասպանության մշակութային անդրադարձներից մինչև հայ և քրդական կինեմատոգրաֆիայի միջև եղած ընդհանրությունները, առանձնակի ուշադրություն դարձվեց մշակույթի ոլորտում ապագա համագործակցության հնարավորություններին: Պանելին ներկա էին տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Փառատոնի վերջին օրվա՝ **հոկտեմբերի 27-ի** երեկոն նվիրված էր Ս. Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի ցուցադրությանը, որից առաջ փառատոնի ղեկավարության խնդրանքով համառոտ ներկայացրի մեծ վարպետի կյանքը, ստեղծագործությունը և ցուցադրվող ֆիլմի առանձնահատուկ նկարագիրը: Ցուցադրման էր ներկայացվել ֆիլմի նոր տեսաձայնագրությունը՝ անգլերեն ենթավերնագրերով և նոր տեսաձայնային մոնտաժով, որում ընդգրկված էին նախկինում չներառված տարբեր հատվածներ և բավականին շատ ծավալով հոգևոր երաժշտություն:

Նույն օրը շատ կարճ հանդիպում ունեցա Դուհոքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Կ. Գրիգորյանի ուղեկցությամբ այցելեցի քաղաքի նորակառույց գեղեցիկ հայկական եկեղեցին:

Փառատոնի ընթացքում հարցազրույցներ տվեցի Դուհոքի քաղաքային և համաքրդական զանգվածային մի քանի լրատվամիջոցների:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Իրաք գործուղումս համարում եմ արդյունավետ՝ Բաղդադում և Քրդստանի Ինքնավար Հանրապետությունում մշակութային համագործակցության տեսանկյունից ընձեռված նոր ու բազմազան կապեր ստեղծելու առումով:

Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում հնարավորություն ընձեռվեց քննարկելու հայկական կինոփառատոներին քրդական կողմի ապագա

մասնակցության, Հայաստանում և Քրդստանում փոխադարձ կինոյի շաբաթներ կազմակերպելու, ինչպես նաև հայ և քուրդ կինոգործիչների համագործակցությամբ նախագծերի իրականացման հարցերը, ինչը կարելի է իրագործել ինչպես անմիջականորեն՝ երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների՝ մասնավորապես Եվրիմաժի և Ստեղծագործ Եվրոպայի միջոցով: Քուրդ գործընկերներիս առաջարկեցի նաև ակտիվ մասնակցություն ցուցաբերել Հայաստանում անցկացվելիք միջազգային կինոփառատոներին:

Հայաստանը և հայերը շատ մեծ դեր ունեն Միջին Արևելքում ինչպես պատմականորեն, այնպես էլ հետանկախության շրջանում, և տարածաշրջանում հայ մշակույթի հանրահռչակման մեծագույն պոտենցիալը պետք է անընդհատ օգտագործել:

**Շնորհակալություն եմ հայտնում Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. Կարեն Գրիգորյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար:**

***ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ***

***- Իրաքի Հանրապետության մշակույթի փոխնախարար Թահեր Նասըր Ալ Հմուդիի և մշակութային արտաքին կապերի վարչության ընդհանուր տնօրեն Ֆալահ Էլ Շաքերիի հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց «Իրաքի Հանրապետության մշակույթի նախարարության և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջև մշակույթի և հնագիտության ոլորտներում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, ինչպես նաև իրաքյան կողմն առաջարկեց ակտիվացնել համագործակցությունը մանկական գրականության երկկողմ թարգմանությունների ուղղությամբ, ինչպես նաև երկու երկրներում մշակութային շաբաթների կազմակերպման միջոցով:***

*- Բաղդադի հայ համայնքի հետ հանդիպման ընթացքում առաջարկվեց տեղի հայ դերասանների մասնակցությամբ Հայաստանում կազմակերպել համայնքային թատերախմբի օպերետային ներկայացումը, ինչպես նաև Բաղդադի հայ համայնքի համար կազմակերպել հայ կինոյի շաբաթ և լուսանկարների ցուցահանդես:*

*- Դուհոքի 6-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում քննարկվեցին հայկական կինոփառատոներին քրդական կողմի ապագա մասնակցության, Հայաստանում և Քրդստանում փոխադարձ կինոյի շաբաթներ կազմակերպելու, ինչպես նաև հայ և քուրդ կինոգործիչների համագործակցությամբ նախագծերի իրականացման հարցերը, ինչը հնարավոր է իրագործել ինչպես անմիջականորեն՝ երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների՝ մասնավորապես Եվրիմաժի և Ստեղծագործ Եվրոպայի միջոցով:*

*- Քրդական կողմին առաջարկեցի ակտիվ մասնակցություն ցուցաբերել Հայաստանում անցկացվելիք միջազգային կինոփառատոներին:*